ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.03.2018թ. ժամը 12.00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը
Ա. Պողոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Մովսիսյանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 44-րդ կետով՝ մերժվել է ԳԱԼՏ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերության հայտը 2-րդ չափաբաժնով: Համաձայն Կարգի 45 կետի՝ ԳԱԼՏ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերության տվյալները համապատասխան հիմքերով տրամադրվել են լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Համաձայն Կարգի 48 կետի 2-րդ ենթակետի՝ 22.02.2018թ. թիվ 2 բացման նիստի արձանագրության 5.1-ի բ) պարբերությամբ սահմանված 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցից՝ Էկոմիքս ՍՊ ընկերությունից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի /լուսադիոդային լամպերի/ անվանումը և տեխնիկական բնութագիրը:

3. Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ 07.03.2018թ. կատարվել է հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/՝ Էկոմիքս ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

2. Հանձնաժողովը արձանագրեց.

2.1 Կոմիտեից երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ Կարգով սահմանված ժամկետում /երեք աշխատանքային օր/ եզրակացություն չի ստացվել:

2.2 Սույն արձանագրության 3 կետով պահանջվող փաստաթղթերը /Հավելվածներ 6 և 6.1/ Էկոմիքս ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են էլեկտրոնային փոստով /կցվում է/: Հավելված 6.1-ով ներկայացված ամբողջական նկարագրերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով հրավերով սահմանված բնութագիր	Էկոմիքս ՍՊԸ-ի կողմից ներկայացված բնութագիր
Լուսադիոդային լամպ	**Լուսադիոդային լամպ Կոսմոս /Չինաստան/**
Տեխնիկական պարամետրեր	Տեխնիկական պարամետրեր
-Լամպի հիմքը: E27	-Լամպի հիմքը: E27
-Հզորությունը 12Վտ	-Հզորությունը 13Վտ
-Աշխատանքային լարման տիրույթը: 165-265Վ	-Աշխատանքային լարման տիրույթը: 165-265Վ
- Չափսերը; երկ.150մմ,տրամագիծը՝ 52մմ	- Չափսերը; երկ.110մմ,տրամագիծը՝ 60մմ
-Լույսի գույնը: տաք-սպիտակ 3000-4200K	-Լույսի գույնը: տաք-սպիտակ 4000K
-Լուսային հոսքը; 1150ԼՄ	-Լուսային հոսքը; 1300ԼՄ
-Կայուն է -25^{0}C մինչև +25^{0}C ջերմային տիրույթում	-Կայուն է -25^{0}C մինչև +25^{0}C ջերմային տիրույթում
-Ծառայության ժամկետը 50000 ժամ	-Ծառայության ժամկետը 30000 ժամ
-Երաշխիքային ժամկետը 3 տարի	-Երաշխիքային ժամկետը 3 տարի

3. Հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, հաշվի առնելով վերոգրյալը՝ ծանուցել Էկոմիքս ՍՊ ընկերությանը մինչև ս.թ. մարտի 16-ը ժամը 16.00 շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

16.03.2018թ. ժամը 16.00

1. Ընդունել ի գիտություն, որ Կոմիտեից երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն:

2. Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները Էկոմիքս ՍՊ ընկերության կողմից չեն շտկվել:

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 2 գնահատման թերթիկները /կցվում են/ ՝ Էկոմիքս ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով մերժել այն 2-րդ չափաբաժնով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

4.2 Երկրորդ չափաբաժնով ներկայացրած Էյչ Գրուպ ՍՊ ընկերության գնային առաջարկը /429 000 ՀՀ դրամ/ գերազանցել է նախահաշվային գինը /364 000 ՀՀ դրամ/:

Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև ս.թ. մարտի 19-ը ժամը 16.00-ը և Էյչ Գրուպ ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնով հրավիրել գների նվազեցման բանակցությունների:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

19.03.2018թ. ժամը 16.00

Ընդունել ի գիտություն, որ սույն արձանագրության 4.2 կետով նշված ժամկետում Էյչ Գրուպ ՍՊ ընկերությունը 2-րդ չափաբաժնով գների նվազեցման վերաբերյալ տեղեկություն չի տրամադրել:

5. Հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությամբ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 37-ի մաս 1-ի կետ 1-ը՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած 2 չափաբաժնով և հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս. Դավթյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Պողոսյան

_____ Ա. Մովսիսյան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան